

Թիւ 26477
Օգոստոս 15, 1979

Հոգեշնորհ
Տ. Վազգէն Ծ. Վրդ. Քէշիշեան
Հովիւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ
Թորոնթօ.

Սիրելի Հայր Վազգէն,

Մարտիլիոյ Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ Հովիւ Հոգշ. Տ. Գարեգին Վրդ. Պէքճեան Օգոստոս 6, 1979 թուակիր նամակով մեզի կը տեղեկացնէ թէ Օգոստոս 17էն մինչեւ 31 Թորոնթօ պիտի այցելէ:

Հայր Սուրբը Գանատա կու գայ հրաւերովը իր մէկ ըարեկամին՝ որուն գաւկին մկրտութիւնը պիտի կատարուի:

Այսու գիրով կը յանձնարարենք որ ընդունիք Հոգշ. Տ. Գարեգին Վրդ. Պէքճեանը եւ Թորոնթօ կեցութեան իր շքշանին արտօնէք որ իր մասնակցութիւնը բերէ կրօնական արարողութեանց եւ օխակատարութեանց:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ